ՀԱՅՈՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՉՈՐՐՈՐԴ ՏԻԵԶԵՐԱԺՈՂՈՎԻՆ

ԳԵՎՈՐԳ ՂԱԶԱՐՅԱՆ

451 թ. Քաղկեդոնի տիեզերաժողովը՝ եկեղեցու պատմության կարևորագույն հանգրվաններից մեկը, թեպետ դարեր շարունակ էական տեղ է զբաղեցրել հայ մատենագրության էջերում, այդուհանդերձ որոշ խնդիրներ առ այսօր ճշգրտման ու լուսաբանման կարիք ունեն: Դրանցից է տիեզերաժողովին հայոց մասնակցության հարցը: Ավանդական տեսակետի համաձայն՝ հայերը տիեզերաժողովին չեն մասնակցել, սակայն հարցի քննությունն ստիպում է վերանայել այդ կտրուկ մոտեցումը:

Նախ հակիրճ անդրադառնանք առաջին երեք տիեզերաժողովներին հայոց մասնակցության խնդրին:

Առաջին տիեզերաժողովը տեղի ունեցավ 325 թ. փոքրասիական Նիկիա քաղաքում: Հայկական աղբյուրների համաձայն՝ Նիկիայի տիեզերաժողովին մասնակցել է սբ. Գրիգոր Լուսավորչի որդին՝ Արիստակեսը (325-333 թթ.)[1], մինչդեռ բյուզանդական աղբյուրները Մեծ Հայքից Նիկիա ժամանած երեք եպիսկոպոսների գիտեն՝ «Հայաստանի Արիստարքեսին» (նույն ինքը՝ Արիստակեսը), Դիոսպոնտոսի (?) Ակրիտասին և Ծոփքի Արսափիոսին (Արսափկիոսին)[2]: Ամենայն հավանականությամբ՝ վերջին երկուսը այլ բան չեն, եթե նույն «Արիստակես» անձնանունը՝ գրչագրական սխալով այլափոխված[3]: Բյուզանդական աղբյուրների համաձայն՝ այս երեքից բացի՝ Նիկիո տիեզերաժողովի մասնակիցների թվում էին Փոքր Հայքից՝ Սեբաստիո Եվլալիոս և Սատաղի Եվիթիոս, իսկ «Միջագետք» նահանգից՝ Նիսիբիի (Մծբնա) Հակոբ, Ամիդի Սիմեոն և Մարտիրոսուպոլսի (Տիգրանակերտի) Մարութա եպիսկոպոսները[4]:

381 թ. Թեոդոս Մեծ կայսեր (379-395 թթ.) և Անտիոքի պատրիարք

---

[1] Տե՛ս Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, քնն. բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցու, Եր., 1909, էջ 490:

[2] Տե՛ս Καλλινίκου Δελικάνη (μητροπολίτου), *Ἡ Πρώτη ἐν Νικαίᾳ Οἰκουμενική Σύνοδος*. Ἐπιμέλεια νέας ἐκδόσεως ὑπὸ Γεω. Ἀχιλ. Στογιόγλου, ἐκδ. οἶκος Κυρομάνος, Θεσσαλονίκη 1997, էջ 148-149:

[3] Տե՛ս **Մաղաքիա** արք. **Օրմանեան**, Ազգապատում, հ. Ա, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 461: Այս կարծիքը հավանական է, եթե նկատի ունենանք, որ սբ. Արիստակեսը մինչև կաթողիկոսական գահին բազմելն ըստ երևույթին եղել է Ծոփքի եպիսկոպոսը: Մյուս կողմից, եթե հաշվի առնենք այն, որ աղբյուրները գիտեն երկու Ծոփքեր՝ Մեծ և Փոքր (Շահունյաց), ապա հավանական է դառնում նաև այն, որ խոսքը տարբեր գավառներում հովված երկու տարբեր անձանց մասին է:

[4] Տե՛ս Καλλινίκου Δελικάνη (μητροπολίτου), նշվ. աշխ., էջ 149:

սբ. Մելետիոսի (361-381 թթ., ծագումով՝ Փոքր Հայքից) ջանքերով Կոստանդնուպոլսում գումարվում է մի ժողով, որը դատապարտում է կայսրությունը խռովող հերետիկոսությունները՝ վավերացնելով Նիկիայի՝ տիեզերաժողովի վարդապետությունը: 381 թ. Կոստանդնուպոլսի այս «մեծ ժողովի» 150 մասնակիցների թվում էին Մելիտենեի Օտրիոս և Արաբիսոսի Օտրիոս եպիսկոպոսները, Ամիդի Մարաս եպիսկոպոսը, ինչպես նաև Սեբաստիայի Պետրոս եպիսկոպոսը, որը սբ. Բարսեղ Կեսարացու (330-379 թթ.) եղբայրն էր[5]:

431 թ. Եփեսոսում գումարված նոր տիեզերաժողովի շուրջ 200 մասնակիցների թվում էին Փոքր Հայքի Մելիտենեի Ակակ եպիսկոպոսը և Արկայի նույնանուն առաջնորդը[6]:

Այսպիսով, առաջին երեք տիեզերաժողովներին հայոց մասնակցության հարցը զննելով, տեսնում ենք, որ դրանցում ներկա են եղել եպիսկոպոսներ Փոքր Հայքից, Ծոփքից, Հայոց Միջագետքից: Վերոնշյալ հայկական տարածքների ներկայացուցիչների ներկայությունը տիեզերաժողովներին մեզ ստիպում է անդրադառնալ դրանց քաղաքական և եկեղեցական դրությանը IV-V դդ.:

Հայտնի է, որ Փոքր Հայքը հայ ժողովրդի կարևորագույն օրրաններից է և պատմական Հայաստանի անքակտելի մասը: Ք. ա. I դ. Մեծ Հայքն անցավ Պոնտոսին, ապա՝ Հռոմեական կայսրությանը և կցվեց Կապադովկիային: Ք. հ. III դ. վերջում այն դարձավ առանձին նահանգ, իսկ Թեոդոս Մեծ կայսրն այս երկրամասը բաժանեց «Առաջին» և «Երկրորդ» Հայքերի՝ համապատասխանաբար՝ Սեբաստիա և Մելիտենե (Մալաթիա) մայրաքաղաքներով[7]:

V դ. դրությամբ Սեբաստիայի մետրոպոլիտության կազմի մեջ էին մտնում Նիկոպոլսի, Կոլոնիայի, Սատաղի, Սեբաստուպոլսի և Բերիսսայի, իսկ Մելիտենեի մետրոպոլիտության մեջ՝ Արկայի, Արաբիսոսի,

---

[5] Տե՛ս **J. D. Mansi**, Sacrorum Consiliorum nova et amplissima Collectio (Floentiae-Venetiis 1759-1798), t. III, 569: Հմմտ. Καλλινίκου Δελικάνη (μητροπολίτου), նշվ. աշխ., էջ 407-408:

[6] Տե՛ս «Acta Conciliorum Oecumenicorum», edit. Ed. Scwartz-J. Straub, Berlin-Leipzig 1914-1984 (այսուհետ՝ ACO), t. I, vol. 2, pars II, էջ 3-4:

[7] Տե՛ս **Ն. Ադոնց,** Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987, էջ 82: Քրիստոնեությունը Փոքր Հայքում տարածվել էր բավականին վաղ, և երկրամասում արդեն III դ. ծավալվել էին հալածանքներ քրիստոնյաների դեմ: Որպես քրիստոնեական կենտրոններ այդ ժամանակ հայտնի էին Սեբաստիան և Մելիտենեն: Ագաթանգեղոսի մի վկայության համաձայն՝ սբ. Գրիգոր Լուսավորիչը Կեսարիայից ձեռնադրված վերադառնալիս իր հետ Սեբաստիայից Մեծ Հայք է բերել բազմաթիվ կրոնավորների (տե՛ս Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, էջ 452): 372 թ. Փոքր Հայքի եկեղեցական իրավիճակի կարգավորմանն իր գործուն մասնակցությունն է բերում հարևան Կապադովկիայի արքեպիսկոպոս սբ. Բարսեղ Կեսարացին: Նա շրջում է երկրում ու թափուր աթոռներին եպիսկոպոսներ ձեռնադրում, ընդ որում մեծն հայրապետի հատուկ հոգսն էր այն, որ երկրամասի հովիվները լինեն հայ ժողովրդի լեզվին ու սովորություններին տեղյակ անձինք (տե՛ս **Պապանդրեու Դամասկինոս** վրդ. (միտրոպոլիտ Շվեյցարիայի), Հայ Եկեղեցու հիմնադրումը և կազմավորումը մինչև Դ Տիեզերական ժողովը (հուն. թարգմ. Եզնիկ ծ. վրդ. Պետրոսյանը), Ս. Էջմիածին, 1997, էջ 108):

Կուկուզի, Կոմանայի, Արիարաթիայի եպիսկոպոսությունները[8]:

Մեծ Հայքի ամենահին քրիստոնեական տարածաշրջաններից էին Ծոփքը և դրանից հարավ ընկած տարածքները՝ Ամիդ (Դիարբեքիր) և Մարտիրոսուպոլիս (Տիգրանակերտ) քաղաքներով: Մեծ Հայքի հարավ-արևմտյան շրջաններում հայերի հետ կար նաև ասորի բնակչություն, ինչի պատճառով էլ աղբյուրներում այս տարածքները և վերոնշյալ քաղաքները փոխնիփոխ հայկական և ասորական են համարվում, թեպետ քաղաքականապես կապված էին Արշակունյաց տերությանը[9]: Եկեղեցական առումով Ծոփքը ենթակա էր Վաղարշապատի կաթողիկոսությանը: Վերջինիս հետ հավանաբար որոշակի կապեր ուներ նաև Ամիդը: Համենայն դեպս, Ագաթանգեղոսն ու Լուսավորչի հունարեն վարքի հեղինակը (VI դ.) Ամիդի տարածաշրջանը սբ. Գրիգորի քարոզչության տարածք են համարում[10]:

Արդ, գալով 451 թ. Կոստանդնուպոլսի Քաղկեդոն արվարձանում հրավիրված չորրորդ տիեզերաժողովին, տեսնում ենք, որ դրան մասնակցել են եպիսկոպոսներ վերը քննված հայկական տարածքներից:

Այսպես, Փոքր Հայքից ժողովական հայրերից էին Սեբաստիո մետրոպոլիտ Հովհաննեսն իրեն ենթակա եպիսկոպոսների՝ Հովհաննես Նիկոպոլսեցու, Կեկրոպիոս Սեբաստուպոլսեցու և Անատոլիոս Սատաղեցու հետ[11]: Մելիտենեի Կոստանդին մետրոպոլիտը Քաղկեդոն էր ժամանել Արիարաթիայի Ակակ, Կուկուզի Դոմնոս, Արաբիսոսի Ադոլիոս, Արկայի Հովհաննես և Կոմանայի Հերակլ եպիսկոպոսների հետ[12]:

Թեմական առաջնորդները տիեզերաժողով էին ժամանել իրենց ուղեկցող հոգևորականաց դասով. չորրորդ տիեզերաժողովի արձանագրություններում առկա են արաբիսոսցի Ադելֆիոս քորեպիսկոպոսի և

---

[8] Տե՛ս **Ն. Ադոնց,** նշվ. աշխ., էջ 106: Հակառակ հայագիտության մեջ տարածված այն կարծիքի, թե Սեբաստիայի և Մելիտենեի աթոռները ենթարկվել են Կեսարիային, բյուզանդական աղբյուրներից երևում է, որ իրականում դրանք երկու անկախ մետրոպոլիտություններ են եղել՝ 451 թվականից սկսյալ ենթակա անմիջաբար Կոստանդնուպոլսի պատրիարքությանը:

[9] Ք. հ. 297 թ. Հռոմեա-պարսկական խաղաղ պայմանագրի համաձայն՝ Հայաստանի հարավ-արևմտյան ծայրամասերը՝ Անգեղ տնից մինչև Ծոփք տարածքները, ինչպես նաև՝ Աղձնիքը, Կորդուքը, Ծավդեքը անցան Հռոմին: 363 թ. Հովիանոս կայսրը՝ այս տարածքները՝ այլ ամրոցներով ու Մծբինով, կրկին հանձնել է պարսիկներին (տե՛ս **Ա. Ալպոյաճեան**, Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրէ, 1950, էջ 16, 58-59):

[10] Տե՛ս Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, էջ 468, «La version Greque ancienne du livre Arménien d'Agathange, édition critique par Guy Lafontaine», Louvain-la-Neuve 1973, էջ 323: 387 թ. Մեծ Հայքի բաժանումից հետո նշյալ տարածքներն անցան Արևելահռոմեական կայսրությանը: Միանշանակ դժվար է ասել, թե քաղաքական այդ բաժանումն ինչ ազդեցություն ունեցավ կայսրությանն անցած հայկական տարածքների եկեղեցական նվիրապետության վրա. հայտնի է, որ բյուզանդական Հայաստանի վրա Վաղարշապատի կաթողիկոսության իրավասությունը չէր տարածվում, բայց միևնույն ժամանակ աղբյուրները թույլ են տալիս պնդելու, որ պարսկա-բյուզանդական սահմանն անանցանելի չէր, և հայության երկու՝ բյուզանդահպատակ ու պարսկահպատակ հատվածների միջև քաղաքական, եկեղեցական ու մշակութային աշխույժ կապերը պահպանվում էին (տե՛ս **Ներսէս** վրդ. **Ակինեան**, Եղիշէ վարդապետ եւ իւր Պատմութիւնն Հայոց պատերազմի, մասն Բ., Վիեննա, 1936, էջ 621-622):

[11] Տե՛ս ACO, t. II, vol. 1, pars II, էջ 142-146:

[12] Տե՛ս նույն տեղը:

Ղուկիոս քահանայի, Եվֆրոն Կուկուզեցի և Օտրիոս Արկացի քահանաների, ինչպես նաև սատաղեցի Դորոթեոս քահանայի ստորագրությունները[13]: Ի միջի այլոց, ծննդով մելիտենեցի էր ժողովի մասնակից, Պաղեստինի Համնիա քաղաքի եպիսկոպոս Ստեփանոսը, որը վանականության հիմնադիր աբբաներից մեկի՝ նույնպես մելիտենեցի սբ. Եվթիմիոս Մեծի (378-473 թթ.) աշակերտն էր[14]:

Ժողովական հայրերի մեջ էր Ամիդի Սիմեոն մետրոպոլիտը՝ իրեն ենթակա Մարտիրոսուպոլսի Զեվենոս (Զավեն), Ծոփքի Նոյ, Անձիտի Մարաս, Մարոնուպոլսի Եվսեբիոս, Վաղարշակուպոլսի (Անգեղի) Կայումաս, ոմն Սիրիկիոս (ըստ Ադոնցի՝ Տիրիկ) եպիսկոպոսների և Պետրոս քահանայի հետ[15]: Ն. Ադոնցի կարծիքով՝ վերոնշյալ «Մարոնուպոլիսն» ու «Վաղարշակուպոլիսը» ձեռագրային աղավաղման պատճառով տեղանուններ դարձած անձնանուններ են[16]: Այդ պարագային «Վեցերորդ Միջագետք» նահանգից տիեզերաժողովին մասնակցած եպիսկոպոսներին կավելանան ևս երկուսը՝ Մարոնն ու Վաղարշակը:

Ուշագրավ է այն, որ Քաղկեդոնի տիեզերաժողովին Մեծ Հայքից մասնակցել է նաև Թեոդոսուպոլսի (Կարինի) Մանասե եպիսկոպոսը, որն այսպիսով պատմությանը հայտնի Կարնո առաջին եպիսկոպոսն է[17]: 387 թ. Հայաստանի բաժանման գիծը, ինչպես հայտնի է, հյուսիսից հարավ իջնում էր Կարինից մինչև Մծբին, ընդ որում՝ Կարինը դառնում էր բյուզանդահպատակ Մեծ Հայքի կարևորագույն քաղաքներից մեկը: Դրանից հետո՝ 421 թ., Թեոդոս Փոքր կայսեր (408-450 թթ.) հրամանով քաղաքն ամրացվում ու վերակառուցվում է՝ կայսեր իսկ պատվին վերանվանվելով «Թեոդոսուպոլիս»: Հավանաբար հենց այս ժամանակներում է Թեոդոսուպոլիսը դառնում եպիսկոպոսանիստ կենտրոն, ըստ երևույթին՝ նաև բյուզանդական Հայաստանի գլխավոր աթոռանիստը: Պատահական չէ, որ քիչ ավելի ուշ Թեոդոսուպոլսի աթոռին առաքելական ծագում պիտի վերագրվեր՝ նրանում Ավետարանի քարոզչությունը կապելով սբ. Բարդուղիմեոս առաքյալի անվան հետ[18]:

Քաղկեդոնի տիեզերաժողովին հրավիրվա՞ծ էին արդյոք Վաղարշապատի կաթողիկոսության ներկայացուցիչները. ահա մի հարց, որ նույնպես կարոտ է պատասխանի: Նախ՝ հրավիրվա՞ծ էին արդյոք նրանք նախորդ երկու՝ Կոստանդնուպոլսի և Եփեսոսի տիեզերաժողովներին:

Կոստանդնուպոլսի ժողովը, ինչպես որ դա ապացուցում են արդի հետազոտությունները, ի սկզբանե հրավիրված չէր որպես տիեզերական, դրանով է բացատրվում թե՛ ժողովի համեմատաբար սակավամարդ լինելը, թե՛ սահմանափակ ներկայացուցչությունը. ժողովին ներ-

---

[13] Տե՛ս նույն տեղը, էջ 146, նաև՝ t. II, vol. 2, pars II, էջ 72:

[14] Տե՛ս նույն տեղը, t. II, vol. 1, pars II, էջ 144:

[15] Տե՛ս ACO, t. II, vol. 1, pars II, էջ 142, 145, 153, նաև՝ t. II, vol. 2, pars II, էջ 69:

[16] Տե՛ս **Ն. Ադոնց,** նշվ. աշխ., էջ 50-51:

[17] Տե՛ս ACO, t. II, vol. 1, pars III, էջ 94:

[18] Տե՛ս **Հ. Մ. Բարթիկյան,** «Narratio de rebus Armeniae», հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր, «Բանբեր Մատենադարանի», Եր., № 6, 1962, էջ 461:

կա էին միայն Փոքր Ասիայի, Պոնտոսի և Թրակիայի (Բալկաններ) եպիսկոպոսները[19]: Հետևաբար, քանի որ ժողովը հրավիրված չէր որպես տիեզերական, հայոց հրավիրված կամ չհրավիրված լինելու հարցը դուրս է գալիս ինքնըստինքյան:

Եփեսոսի ժողովի կազմը որոշվել է Թեոդոս Փոքր կայսեր հրովարտակով, համաձայն որի՝ յուրաքանչյուր մետրոպոլիտական շրջանից ժողովին պիտի մասնակցեր երեք ներկայացուցիչ: Այդ կարգն իրականում չպահվեց, և պատահական չէ, որ Եփեսոսում հայկական տարածքներից ոչ մի մասնակից չկար, բացի Ակակ Մելիտենեցուց և իրեն ենթակա Արկայի եպիսկոպոսից: Ակակի ներկայությունը բացատրվում է թերևս լոկ նրանով, որ Մելիտենեի առաջնորդը սբ. Կյուրեղի ամենաեռանդուն պաշտպաններից էր: Կազմակերպչական առումով Եփեսոսի ժողովը շատ խոցելի ընթացք ունեցավ, և այդ էր հիմնական պատճառը, որ ժողովից հետո դրա տիեզերական լինելու հանգամանքի ճանաչումը առկախ մնաց:

449 թ. նույն Եփեսոսում հրավիրվեց նոր տիեզերաժողով՝ Ալեքսանդրիայի Դիոսկորոս պատրիարքի նախագահությամբ, սակայն ժողովի ժամանակ գործադրված բռնության դեպքերի պատճառով այն պատմության մեջ մտավ «ավազակաժողով» հորջորջումով: Այս ամենը հաշվի առնելով՝ Քաղկեդոնի ժողովը հրավիրելիս պետությունը շատ լուրջ վերաբերվեց հենց կազմակերպչական կողմին: Ի դեպ՝ ժողովի նախագահությունը հանձնվեց Հռոմի պապի ներկայացուցիչներին ու Կոստանդնուպոլսի Անատոլ պատրիարքին (449-458 թթ.), սակայն նիստերը վարում էին կայսերական ներկայացուցիչները՝ «իշխանները», թեպետև առանց քվեարկելու իրավունքի: Դրանց թվում էր կայսեր սենեկապետ, դատավոր և սենատոր Արտաշես Մամիկոնյանը[20]:

Քաղկեդոնի տիեզերաժողովի խիստ կազմակերպված լինելու շնորհիվ է՝ որ այն ունեցավ այդքան շատ մասնակիցներ՝ մոտավորապես 630 ժողովականներ: Յոթ տիեզերաժողովների մեջ Քաղկեդոնի ժողովն ամենամարդաշատն էր. կայսերական հրովարտակը, որով հրավիրվում էր տիեզերաժողովը, պատվիրում էր մետրոպոլիտներին ժողովին ներկայանալ ցանկացած թվով եպիսկոպոսներով, միայն թե նրանք բավականաչափ հմուտ լինեին աստվածաբանության մեջ:

Ահա այս ամենի տրամաբանությամբ հավանական է, որ Հայաստանի պարսկական տիրապետության հատվածից հայեր ևս հրավիրված լինեին: Կոստանդնուպոլսո սբ. Փոտ պատրիարքը (858-867, 877-886 թթ.), Քաղկեդոնի տիեզերաժողովի մասին խոսելով, տեղեկացնում է. «Եւ Հայք վտանգեալք ի հինից Պարսից, ոչ զաւրեցին եւ պարապեցան գալ ի Ժողովն. Վասն այնորիկ ոչ եհաս պատճառ Ժողովոյն ի Հայք հաւաստեաւ: Բայց հակառակութիւն վասն Ժողովոյն ի Հայք ինչ ոչ գոյր.

---

[19] Տե՛ս **Βλ. Ι. Φειδά**, Εκκλησιαστική Ιστορία Α΄. Απ΄αρχάς μέχρι την Εικονομαχία, Αθήναι 2002, էջ 519:

[20] Տե՛ս **Հ. Մ. Բարթիկյան,** Առաջին Մամիկոնյանները բյուզանդական արքունիքում, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., № 3, 1986, էջ 14-15:

այլ ամենեքեան ընդունէին զԺողովն մինչեւ ի ժողովն Դունայ...»[21]: Պատրիարքի տեղեկությունը ճշգրիտ է, քանի որ տիեզերաժողովի հրավիրման հրովարտակը հրապարակվեց 451 թ. մայիսի 17-ին, տիեզերաժողովն իր աշխատանքներն սկսեց հոկտեմբերի 8-ին, իսկ նույն թվականի մայիսի 26-ին տեղի ունեցած Ավարայրի ճակատամարտից հետո Հայաստանյայց եկեղեցու առաջնորդները՝ սբ. Հովսեփ կաթողիկոսի (437-452 թթ.) գլխավորությամբ, ձերբակալվել էին ու Պարսկաստան տարվել: Փոտ հայրապետի խոսքից երևում է, որ պարսկահպատակ հայերի՝ տիեզերաժողովին չժամանելու պատճառը եղել է երկրի անբարենպաստ վիճակը և ոչ թե չհրավիրված լինելը: Այսինքն՝ հայերը հրավիրված եղել են, սակայն չեն կարողացել տիեզերաժողովին մասնակցել՝ պարսիկներից վտանգված լինելու պատճառով:

Քաղկեդոնի տիեզերաժողովը երկու կարևորագույն խնդիր լուծեց: Նախ՝ տիեզերական հռչակեց 381 թ. Կոստանդնուպոլսի և 431 թ. Եփեսոսի ժողովները, որոնք դրանից հետո համարվեցին համապատասխանաբար՝ երկրորդ և երրորդ տիեզերաժողովներ[22]: Եվ ապա՝ Քաղկեդոնի ժողովական հայրերը մշակեցին ու հրապարակեցին քրիստոսաբանական սահմանը, որով մերժվեցին Եվտիքեսի և Նեստորի մոլորությունները: Ստորև բերում ենք այդ սահմանի մեր թարգմանությունը՝ կատարված հունարեն բնագրից[23].

«Արդ, սբ. Հայրերին հետևելով, բոլորս միաբան ուսուցանում ենք խոստովանել մեկ և նույն Որդուն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին, Որ նույն Ինքը կատարյալ է Աստվածությամբ և նույն Ինքը կատարյալ է մարդկությամբ, ճշմարտապես Աստված է և նույն ինքը ճշմարտապես մարդ՝ բանական հոգով ու մարմնով: Ըստ Աստվածության համագոյ է Հորը և նույն Ինքն ըստ մարդկության համագոյ է մեզ. ըստ ամենայնի նման է մեզ՝ բացի մեղքից: Որ հավիտյաններից առաջ Հորից ծնվել է ըստ Աստվածության և նույն Ինքը վերջին օրերին մեզ և մեր փրկության համար Աստվածածին կույս Մարիամից [ծնվել է] ըստ մարդկության: Մեկ և նույն Քրիստոսը՝ Տեր Որդին Միածին, որ երկու բնությունների մեջ իմացվում է անշփոթաբար, անփոփոխաբար, անբաժանապես և անանջատապես: Բնությունների տարբերությունը միության պատճառով բնավ չի վերանում, այլ յուրաքանչյուր բնության հատկությունն առավել պահպանվում է և մեկ Դեմքի ու մեկ Անձի մեջ միավորվում: Որ երկու դեմքերի չի մասնատվում կամ բաժանվում, այլ մեկ և նույն Որդին միածին՝ Բանն Աստված Տեր Հիսուս Քրիստոսը, ինչպես որ ի վերուստ մարգարեները Նրա մասին, և Ինքը՝ Հիսուս Քրիստոսը, մեզ խրատեց և Հայրերի հանգանակը մեզ ավանդեց»:

Այսպիսով, պատմական վավերագրերի քննությունից պարզվում

---

[21] «Թուղթ Փոտայ պատրիարքի առ Զաքարիա կաթողիկոս Հայոց Մեծաց», «Հանդէս ամսօրեայ», 1968, թիվ 1-3, էջ 67:

[22] Տե՛ս **Βας. Ν. Γιαννοπούλου**, Ἱστορία καὶ Θεολογία τῶν Οἰκουμενικῶν Συνόδων, Ἀθήνα 2011, էջ 234-235:

[23] Սահմանի բնագիրը տե՛ս ACO, t. I, vol. 1, pars II, էջ 129-130:

է, որ Քաղկեդոնի տիեզերաժողովին իրենց ներկայությունն են բերել շուրջ քսանհինգ մասնակիցներ Փոքր Հայքից, Ծոփքից, Հայոց Միջագետքից ու Կարինից: Նույն այդ շրջաններից (բացառությամբ Կարինի) մասնակիցներ եղել են նաև առաջին երեք տիեզերաժողովներում, և ուրեմն որոշակիորեն կարելի է խոսել տիեզերաժողովներին հայկական տարածքների ներկայացուցիչների շարունակական ներկայության մասին: Այստեղ վստահաբար էական դեր է խաղացել այն, որ նշված տարածքները հիմնականում ենթակա էին Արևելահռոմեական (Բյուզանդական) կայսրությանը, քանի որ տիեզերաժողով հրավիրողն ու կազմակերպիչը նույն ինքը կայսրն էր: Շոշափվող հարցերի քննությունը թույլ է տալիս նաև նորովի նայելու չորս տիեզերաժողովներին հայկական տարածքների մեծ մասի հոգևոր տեսչության՝ Վաղարշապատի կաթողիկոսության ներկայության հարցին:

Բանալի բառեր – *Տիեզերական ժողով, հավատո հանգանակ, Նիկիա, Եփեսոս, Քաղկեդոն, Մեծ Հայք, Փոքր Հայք*

ГЕВОРГ КАЗАРЯН – ***Участие армянских иерархов в Четвёртом вселенском соборе.*** – Четвёртый вселенский собор состоялся в 451 г. в Халкидоне. Его протоколы зафиксировали, что на соборе присутствовали до 25-ти посланцев армянских территорий. Среди них Иоанн Севастийский и Константин Мелитенский (Малая Армения), Симеон Амидский (Софена) и Манасий Феодосиопольский (Каринский) (Великая Армения). Присутствие армянских епископов в Халкидоне тесно связано с их участием в трёх предыдущих вселенских соборах, включая второй (Константинополь, 381) и третий (Эфес, 431). Отдельного внимания заслуживает участие во вселенских соборах представителей Вагаршапатского (Эчмиадзинского) католикосата. Очевидно, их пригласили и в Халкидон, однако вагаршапатские иерархи не смогли прибыть на собор из-за вспыхнувшего в это время восстания против персов.

Ключевые слова: *вселенский собор, символ веры, Никея, Эфес, Халкидон, Великая Армения, Малая Армения*

GEVORK GHAZARYAN – ***The Participation of Armenians in the Fourth Ecumenical Council.*** – The study of the documents of the fourth Ecumenical Council, convened in 451 at Chalcedon, reveals the presence of about 25 representatives from Armenian territories: among them - the Metropolitans from Armenia Minor - John of Sebaste and Constantine of Melitene, Simeon of Amida from Armenian Mesopotamia and Tsopk (Sophene), as well as Manasses of Theodosiopolis (Karin) from Great Armenia. The problem of the presence of Armenian bishops at Chalcedon is closely connected with their participation in the previous three Ecumenical Councils, the second (Constantinople, 381) and the third (Ephesus, 431) of which were declared Ecumenical in the Council of Chalcedon. Special attention should be paid on the question of the participation of Armenian Catholicosate of Vagharshapat (Etchmiadzin) at the Ecumenical Council. Obviously, the Catholicosate was invited to Chalcedon but was unable to participate in the Council because of the revolt of Armenians against Persians.

Key words: *Ecumenical Council, Creed, Nicaea, Ephesus, Chalcedon, Great Armenia, Minor Armenia*